ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 03

22 հունվարի 2025 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 01 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը, Հրայր Ասատրյանը և Ռոբերտ Հովսեփյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված **«Գումար հատկացնելու մասին»** նախագիծը՝ Խոյ համայնքի 2025 թվականի հունվարի 24-ի ավագանու արտահերթ նիստում :

Նիստում քննարկվեց Ջերմուկ քաղաքում 2025 թվականի փետրվարի 1-ից 7-ը կայանալիք համահայկական ձմեռային երկրորդ խաղերին մասնակցության համար համայնքի բյուջեից գումար հատկացնելու հարցը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Ջերմուկ քաղաքում 2025 թվականի փետրվարի 1-ից 7-ը կայանալիք համահայկական ձմեռային երկրորդ խաղերին մասնակցության համար համայնքի բյուջեից տրամադրել 5000000/հինգ միլիոն/ ՀՀ դրամ գումար:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ